

## ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՄԸ



Հ.Բ.Ը.Միության Մոնթրեալի մասնաճիղի Մշակութային յանձնախումբը կազմակերպած էր միջ-դպրոցական «Տաղանդներու Ցայտնաբերման» երեկոյ մը, մասնակցութեամբ Նարեկ եւ Հ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան վարժարաններու աշակերտութեան, Կիրակի, 29 Հոկտեմբեր 2006, կէսօրէ ետք ժամը 3-ին, Հ.Բ.Ը.Միության Ալեք Մանուկեան կեդրոնի Ժիրայր եւ Էլիզ Տերվիշեան սրահին մէջ:

Մեծ խանդավառութիւն կար սրահին մէջ, քանի որ, տարիներու սովորութիւն դարձած ասմունքի մրցանակը կը փոխարինուէր յոյժ էական, օգտակար եւ քաջալերելի նոր

միջոցառումով մը՝ «Տաղանդներու Ցայտնաբերումով»:

Արդարեւ, հանգիստ եւ անկաշկանդ, զոյգ հայկական դպրոցներու շուրջ քառասուն աշակերտները բեմ բարձրացան իրենց ձիրքերը ցոյց տալու արուեստի այլազան մարզերու մէջ, ինչպէս նուազի (դաշնակ, ջութակ, ֆլիթ) երգի (մեներգ, զուգերգ, խմբերգ) ասմունքի, պարի, օղակախաղի եւ վերջապէս նկարչութեան մէջ:

Սրահը նեղ կու գար ներկայ եղող ծնողներուն, բարեկամներուն թէ միութենական ներկայացուցիչներուն համար:

Թարգմանչաց տօնին առիթով կազմակերպուած այս ձեռնարկը նուիրուած էր նորոգ հանգուցեալ հայրենի մեծանուն բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանին, որուն նկարը դրուած էր բեմին վրայ:



Հանդիսութիւնը սկսաւ Մշակութային յանձնախումբի ժրջան ատենապետուհի տիկին Արսիճէ Ադդարեանի բարի գալուստի խօսքով, որմէ անմիջապէս ետք, հակիրճ կերպով ան ներկայացուց Սիլվա Կապուտիկեանի կեանքն ու գործը, միաժամանակ ցուցադրելով սահիկներ, տալով հետաքրքրական պահեր անոր կեանքէն: Ապա, տիկ. Ադդարեան մի առ մի հրաւիրեց, պատրաստուած յատուկ գրքոյկ-յայտագիրներուն համաձայն, մասնակից աշակերտները, որոնք զիրար գերազանցեցին: Մինչ հանդիսութիւնը տեղի կ'ունենար, սրահին խորքը, նկարչութեամբ կը զբաղէին շուրջ (10) տասը աշակերտներ, որոնք հանդէսի վերջաւորութեան ցուցադրեցին, տեղւոյն վրայ գծած իրենց նկարները:

Ծափողջուցներու տարափին տակ, բեմ բարձրացան բոլոր մասնակիցները, ստանալու համար իրենց յիշատակի գնահատագիրները Մոնթրեալի մասնաճիղի ատենապետուհի տոքթ. Ռիդա Գուլումճեանէն եւ քաղաքս հիւրաբար ներկայ գնտուող, ասմունքող Տոքթ. Տիգրան Աբրահամեանէն:

Տոքթ. Գուլումճեան շնորհատրեց բոլոր մասնակցող աշակերտները, անոնց ծնողներն ու ուսուցիչները: Նմանապէս, ան մաղթեց որ անոնք ապագայի մեր բեմերուն զարդերը հանդիսանան: Մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց ձեռնարկին կազմակերպիչ Մշակութային յանձնախումբին, զոյգ վարժարաններու տնօրէնութեանց, ուսուցիչներուն, ծնողաց եւ մասնակից աշակերտներուն, այսօրուան բացառիկ յաջողութեան համար:



Ապա տեղի ունեցաւ կոկիկ հիւրասիրութիւն մը, ուր ներկաները առիթ ունեցան ունենալու մտերմիկ զրոյցներ:

Ա.Ն.